## Ողջու՜յն ընկերներ:

Իմ անունը Սթորի է: Ես ապրում էի Թուրքմենստանում: Դա պետություն է Կենտրոնական Ասիայում: Ես սիրում եմ կարդալ, նկարել և կարել: Ես սիրում եմ հայրիկիս հետ նայել աստղերին: Ես և իմ ընտանիքը Եկեղեցու միակ անդամներն էինք ՈՂՋ երկրում:

# Պատմություն Սթորիի մասին

Ջիլ Հալքինգ
Եկեղեցու ամսագրեր



### ԱՂՈԹԵԼՈՎ ՄԻՍՍԻԻ ՀԱՄԱՐ

*Մի օր ուժեղ փոթորիկից հետո իմ ընկերոջ կատուն՝ Միսսին, կորել էր: Մենք նրան որոնեցինք, բայց չկարողացանք գտնել: Ես ասացի, որ մենք կարող էինք աղոթել: Իմ ընկերեները չգիտեին ինչպես աղոթել, ուստի ես ցույց տվեցի նրանց: Մենք բոլորս ծնկի իջանք, և յուրաքանչյուրն ասաց իր սեփական աղոթքը: Ապա մենք վեր կացանք և սկսեցինք նորից որոնել: Մի աղջիկ վազեց մեզ մոտ և ասաց, որ նա գտել էր Միսսիին: Ես երջանիկ էի, որ կիսվեցի ավետարանի մի մասով իմ ընկերների հետ:*







### ՍՈՎՈՐԵԼՈՎ ՄԻՄՅԱՆՑԻՑ

*Ես և իմ քույր Սառան դպրոց էինք հաճախում շատ երկրներից եկած երեխաների հետ: Մենք սիրում էինք սովորել մեկս մյուսից և զվարճանալ:*





### ՁԵՌՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ

*Ես և Սառան հրավիրեցինք մեր ընկերներին խաղալու: Մենք նկարեցինք, կատարեցինք ձեռքի աշխատանքներ և զբոսախնջույք կազմակերպեցինք: Սուրբ Ծննդյան տոներին մենք դիմակահանդես կազմակերպեցինք մեր թաղամասի ընկերների հետ:*





### ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆԸ

*Քանի որ մենք Եկեղեցու միակ անդամներն էինք, եկեղեցու ժողովները մեր տանն էինք անցկացնում: Մենք անցկացնում էինք հաղորդության, երգի ժամ և երեխաների միության դասեր: Ես դաշնամուր էի նվագում երգի ժամին:*



### ՈՒՂԱՐԿԵՔ ՄԵԶ ՁԵՐ ՈՏՆԱՀԵՏՔԸ

Ինչպե՞ս եք հետևում Հիսուսին՝ ուղիղ կանգնելով: Գծեք ձեր ոտնահետքը և ձեր ծնողների թույլտվության հետ միասին ուղարկեք ձեր պատմվածքն ու լուսանկարը: Ուղարկեք այն առցանց liahona.lds.org հասցեով (սեղմեք “Submit an Article”) կամ ուղարկեք է-փոստով liahona@ldschurch.org: